

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

2022 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ՄԱՍ I

Երևանի քաղաքապետի զեկույցը 2022 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Երևան քաղաքի 2022 թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2021 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու հնգամյա ծրագրի տրամաբանությամբ ու սկզբնական ժամանակաշրջանի համար իրագործելի այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Երևան քաղաքի 2022 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, քաղաքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:

5. Քաղաքի կառավարման ներառականության բարելավումը:
6. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
7. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
8. Կոշտ թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծման, այդ թվում՝ աղբահանության կազմակերպման և կարգավորման, նոր աղբավայրի և աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովումը:
9. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման մեկնարկի ապահովումը:
10. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և բնակիչների միջև համագործակցային կապի ամրապնդումը:
11. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացումն ու գործունեության թափանցիկության ապահովումը:
12. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
13. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Երևանի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
14. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնախնդրի լուծումը:
15. Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրումը:
16. Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
17. Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
18. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
19. «Խելացի քաղաք» ծրագրի ներդրում, կառավարման օպտիմալացումն ու ծառայությունների որակի բարելավումը:
20. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատումն ու պահպանումը, ինչպես նաև տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը:

21. Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:
22. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:
23. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
24. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովումը:
25. Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը, Երևանի կանաչապատման և կանաչ տարածքների պահպանման նոր մոդելի ներդրումը:
26. Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծման մեկնարկի ապահովումը:
27. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
28. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
29. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:
30. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

ՄԱՍ II

Բացատրագիր-Հիմնավորում

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծի

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

եկամուտների գծով՝ 94,560,201.2 հազ. դրամ,

ծախսերի գծով՝ 98,821,222.9 հազ. դրամ,


դեֆիցիտը՝ 4,261,021.7 հազ. դրամ:

1. Եկամուտների կանխատեսում.

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 94,560,201.2 հազ. դրամի չափով՝ Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով ի սկզբանե հաստատված 92,420,288.7 հազ. դրամ դիմաց: Ծրագրված եկամուտները գերազանցում են 2021 թվականի հաստատված նույն ցուցանիշի 2,139,912.5 հազ. դրամով կամ 2%-ով:


Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 34,538,631.0 հազ. դրամ՝ 2021 թվականի նախատեսվածից 3,844,805.2 հազ. դրամով կամ 12.5%-ով ավելի, իսկ 2020 թվականի փաստացի սեփական եկամուտներից՝ 10,009,678.8 հազ. դրամով կամ շուրջ 30%-ով ավելի: Ըստ էության կարելի է արձանագրել, որ Երևան քաղաքի սեփական եկամուտների աճի դինամիկան պահպանվում է, մասնավորապես 2017 թվականից ի վեր նշված ցուցանիշը աճել է շուրջ 13,995,460.5 հազ. դրամով կամ 59%-ով: Ստորև գրաֆիկական հ. 1 և հ. 2 պատկերներով ներկայացվում է Երևան քաղաքի սեփական եկամուտների աճման դինամիկան սկսած 2017 թվականից:

Երևան քաղաքի սեփական եկամուտներ



(պատկեր 1)

Երևան քաղաքի սեփական եկամուտներ



(պատկեր 2)

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները ծրագրվել են 25,348,032.7 հազ. դրամի չափով կամ 2021 թվականի համար հաստատված ցուցանիշից 3,115,715.3 հազ. դրամով կամ 14%-ով ավելի: Հաշվի առնելով ՀՀ Հարկային Օրենսգրքի (օրենսգիրք) 11-րդ բաժինը, 2021 թվականին նախատեսված հարկային եկամուտները ավել են 2021 թվականի հաստատված ցուցանիշից 3,144,736.1 հազ. դրամով կամ 15,5%-ով, որից.

- Անշարժ գույքի հարկը նախագծով նախատեսվել է 9,290,641.1 հազ. դրամ կամ 2021 թվականի համար հաստատված ցուցանիշից 2,814,996.1 հազ. դրամով ավելի, որը իսկ 2020 թվականի փաստացի ցուցանիշից 4,470,933.0 հազ. դրամով կամ շուրջ 92.8%-ով ավելի
- Փոխադրամիջոցի գույքահարկի գծով նախատեսվում է հավաքագրել 12,444,850.3 հազ. դրամ, 2021 թվականի բյուջեով հաստատված 12,115,110.3 հազ. դրամի դիմաց կամ 329,740.0 հազ. դրամով ավել, ինչը ավել է 2020 թվականի փաստացի հավաքագրված գումարից 3,794,500.6 հազ. դրամով կամ շուրջ 43,9 %-ով:

Տեղական տուրքերի գծով 2022 թվականին ծրագրվել են 3,152,541.3 հազ. դրամի մուտքեր, 2021 թվականին նախատեսված 3,184,562.1 հազ. դրամի դիմաց կամ 32,020.8 հազ. դրամով պակաս, ինչը ավել է 2020 թվականի փաստացի ցուցանիշից 62,064.9 հազ. դրամով կամ շուրջ 2%-ով, մասնավորապես որոշակի նվազեցումը այս մասով պայմանավորված է մի քանի տեղական տուրքերի նախատեսվող հավաքագրումների փոփոխությամբ՝ այդ թվում նաև ավելացմամբ, որտեղ հիմնական նվազեցումը՝ շուրջ 50,902.4 հազ. դրամի չափով, կայացել է՝ համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին), ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար վճարվող տեղական տուրքի գծով:

Տեղական տուրքերի կազմում համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 2022 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվել է 1,444,500.0 հազ. դրամ՝ 2021 թվականին նախատեսված 1,422,500.0 հազ. դրամից 22,000.0 հազ. դրամով կամ 1.5%-ով ավել:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2022 թվականի համար նախագծով ծրագրվել են 460,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 3,000.0 հազ. դրամով ավել, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 80,000.0 հազ. դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 380,000.0 հազ. դրամ:

1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 22,449,645.2 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ՝ 2021 թվականի հաստատված բյուջեից 3,261,358.0 հազ. դրամով կամ 12.7%-ով պակաս: Ընդ որում.

- Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 1,295,095.3 հազ. դրամ՝ 2021 թվականի ճշտված ցուցանիշից 950,818.7 հազ. դրամով կամ 42.3%-ով պակաս, որը ներառում է Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերի շուրջ ծրագրի շրջանակներում ստացվող դրամաշնորհները:
- Կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 712,950.1 հազ. դրամ՝ 2021 թվականի ճշտված ցուցանիշից 248,178.0 հազ. դրամով կամ 25.8%-ով պակաս, որը նախատեսում է Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում ստացվող դրամաշնորհները:
- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսվել է 13,430,355.1 հազ. դրամ՝ 2021 թվականի ճշտված և 2020 թվականի փաստացի ստացված ցուցանիշների չափով:
- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 6,596,244.7 հազ. դրամ՝ 2021 թվականի ի սկզբանե հաստատվածից 1,877,361.3 հազ. դրամով

պակաս, իսկ ճշտված ցուցանիշից 2,062,387.4 հազ. դրամով ավել: (ցանկը կցվում է):

- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսվել են 415,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 185,000.0 հազ. դրամով կամ 30.8%-ով պակաս:

1.3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները 2022 թվականի նախագծով ծրագրվել են 46,762,523.3 հազ. դրամ՝ 2021 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 40,482,812.2 հազ. դրամի դիմաց, ինչը նաև ավելացում է 2021 թվականի հաստատված ցուցանիշի նկատմամբ՝ 2,285,555.2 հազ. դրամի կամ 5.1%-ով, որից.

- շահաբաժինների գծով 2022 թվականին ծրագրվել է 81,472.0 հազ. դրամ՝ 2021 թվականին նախատեսված ցուցանիշից 39,894.0 հազ. դրամով կամ 32.9%-ով պակաս: Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով համայնքային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները և կանխատեսումները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշմամբ հաստատված կարգի դրույթները,
- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 1,085,067.1 հազ. դրամ՝ 2021 թվականին նախատեսված 655,130.0 հազ. դրամի դիմաց կամ 429,937.1 հազ. դրամով ավել՝ հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումը, մասնավորապես հաշվարկը շուկայական արժեքի մոտարկված կադաստրային արժեքով, ներառյալ ավագանու որոշմամբ սահմանված կարգով և դրույքաչափերով վարձակալության պայմանագրերի վերանայման հնարավորությունները,
- համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 157,673.6 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 2,326.4 հազ. դրամով կամ 1.4%-ով պակաս,

- այլ գույքի վարձակալությունից մուտքերը ներառում են համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի, բացառությամբ հողերի, վարձակալության տրամադրման դիմաց գանձվող վարձավճարները և ծրագրվել են 321,236.5 հազ. դրամ՝ 2021 թվականի նախատեսված 324,063.1 հազ. դրամի դիմաց,
- պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև Երևանի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման, Երևանի կոշտ թափոնների կառավարման, Երևանի քաղաքային լուսավորության քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախագծով 2022 թվականի համար ծրագրվել են 37,571,925.0 հազ. դրամ՝ 2021 թվականի ճշտված 32,021,303.8 հազ. դրամի դիմաց՝ 5,550,621.2 հազ. դրամով կամ 17.3%-ով ավել, հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները (ցանկը կցվում է):
- տեղական վճարների գծով ծրագրվել է 6,009,429.1 հազ. դրամ՝ 2021 թվականի 5,726,329.3 հազ. դրամի համեմատ՝ 283,099.8 հազ. դրամով կամ 4.9%-ով ավել: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարի դրույքաչափերը սահմանելու մասին» N 347-Ն որոշմամբ սահմանված և 2012 թվականից կիրառվող աղբահանության վճարը, որը ծրագրվել է 3,740,996.3 հազ. դրամի չափով 2021 թվականի նույն ցուցանիշից 269,021.5 հազ. դրամով կամ 7.7%-ով ավել, ինչպես նաև համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար և


շահագործման թույլտվության ձևակերպման համար ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 151,000.0 հազ. դրամ: Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 2,000.0 հազ. դրամի մուտքեր: Միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ տեղական վճար համարվող ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայատեղում կայանելու համար ծրագրվել է 1,210,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար նախատեսվել է՝ 43,200.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ 650,321.5 հազ. դրամ, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային սեփականության թանգարանների մուտքի համար՝ 15,000.0 հազ. դրամ, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ 2,358.0 հազ. դրամ, անասնաբույժի ծառայության դիմաց վճարի համար՝ 9,000.0 հազ. դրամ, համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ 2,000.0 հազ. դրամ, այլ տեղական վճարների համար՝ 169.300.0 հազ. դրամ:

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 200,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականին ծրագրվածի չափով՝ հիմք ընդունելով ընթացիկ տարվա փաստացի ցուցանիշը:
- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 575,700.0 հազ. դրամ՝ այդ թվում ավտոկայանատեղի վճարի չվճարման սահմանված դեպքերում նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառումից մուտքերը, նախորդ տարվա 495,100.0 հազ. դրամի դիմաց,

- մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից եկամտի գծով նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ:
- նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերի՝ տրամադրված արտաքին աղբյուրներից եկամտի գծով ծրագրվել է 12,000. հազ. դրամ՝ 2021 թվականին ծրագրված ցուցանիշի չափով:
- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 728,020.0 հազ. դրամ՝ 2021 թվականի բյուջեով նախատեսված 747,520.0 հազ. դրամի դիմաց:
- նախատեսվում է նաև 5,375,454.9 հազ. դրամի չափով վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:


Ամփոփելով Երևան քաղաքի 2022 թվական բյուջեի նախագծով առաջարկվող եկամտային մասը՝ ներկայացվում է 2022 թվականի ընդամենը եկամուտների ամփոփ պատկերը՝ հ.3 պատկերով, ըստ առանձին-առանձին խմբերի տեսակարար կշռի և միաժամանակ սեփական եկամուտների բացվածքը տեսակարար կշռի վերձանման սկզբունքով՝ հ.4 պատկերով :

Երևան քաղաքի 2022թ. բյուջեի ընդամենը եկամուտների տեսակարար կշիռը



(պատկեր 3)

Երևան քաղաքի 2022թ. բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը




(պատկեր 4)

2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 98,821,222.9 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 94.5%-ը կամ 93,405,251.7 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 15,812,426.7 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի և ելքերի գումարը կազմում է 5,021,000.0 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը պակաս է 2021 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ծախսային մասից 1,955,542.6 հազ. դրամով, որը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա համեմատ դեֆիցիտի նվազմամբ:


Կարևորելով համայնքային բյուջեների կապիտալ ելքերը, ներկայացվում է Երևան քաղաքի 2017-2021թթ. հաստատված բյուջեների և 2022 թվականի բյուջեի նախագծով առաջարկվող կապիտալ ելքերի գծով գրաֆիկը (պատկեր 5):




(պատկեր 5)

Երևան համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծով խոշոր կապիտալ ելքերից են հանդիսանում Երևան քաղաքի ենթակայության տակ գտնվող նախադարոցական հաստատությունների հիմնանորոգման և կառուցման, ինչպես նաև Երևանի ենթակայության տակ գտնվող առողջապահական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները, ուստի այս մասով ներկայացվում է Երևան համայնքի 2017-2021թթ.

հաստատված բյուջեների և 2022 թվականի բյուջեի նախագծով հատկացումները (պատկեր 6 և 7):



(պատկեր 6)




(պատկեր 7)

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն)

ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 37.9%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 18.6%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 14.3%:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծի՝ բյուջետային գործառական դասակարգման տեսակարար կշիռը՝ ընդամենը ծախսերի կազմում (պատկեր 8):



(պատկեր 8)

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 10,969,483.5 հազ. դրամի չափով, որից 10,869,483.5 հազ. դրամը վարչական մասը (վարչական եկամուտների 10.9%-ը), իսկ 100,000.0 հազ. դրամը ֆոնդային մասը, իսկ հատկացումը պահուստային ֆոնդի վարչական մասից՝ ֆոնդային բյուջե, կազմում է 5,375,454.9 հազ. դրամ: Վարչական մասի պահուստային ֆոնդից 5,394,028.6 հազ. դրամը նախագծով

նախատեսվում է հատկացնել՝ հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը, որպես պատվիրակված լիազորություն Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի կատարմանը՝ այդ թվում նաև համակարգմանն ու կառավարմանը:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով, քանի որ այն ծախսային մասով ներառելու դեպքում չէր ապահովվի «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով պահուստային ֆոնդի վարչական մասի համար նախատեսված նվազագույն 5%-անոց շեմը: Նման օրենսդրական շեմն ըստ էության խնդիր է առաջացնում համայնքներից միայն Երևան համայնքում, հաշվի առնելով եկամուտների կազմում պատվիրակված լիազորությունների իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը ընդհանուրի տեսակարար կշռում:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

Կառավարման մարմնի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 10,226,990.8 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 10.3%-ը, ինչը 2021 թվականի ճշտված համապատասխան ցուցանիշից ավել է 809,869.0 հազ. դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում **աշխատավարձի ֆոնդը**՝ 7,857,245.5 հազ. դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա՝ հաշվի առնելով նաև դրանում կատարված փոփոխությունները: Հաստատված հաստիքացուցակով նախատեսված

2021.5 հաստիքից նշված ծախսային հողվածին բաժին է ընկնում թվով 1981.5 հաստիքներ (առանց պատվիրակված լիազորությունների համար նախատեսված հաստիքների), որից միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակը կազմում է 1684.5 Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2022 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է հավելավճարների, արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար: 2021 թվականի ճշտված՝ 1,852,259.2 հազ. դրամի դիմաց՝ **պարզևարման ֆոնդը** նախատեսվել է 1,752,259.2 հազ. դրամով պակաս, կազմելով՝ 100,000.0 հազ. դրամ: **Էներգետիկ ծառայությունները** ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2022 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N422-Ն, 2016 թվականի նոյեմբերի 25-ի N333-Ն և 2017 թվականի նոյեմբերի 22-ի N499-Ն որոշումների պահանջները: Մասնավորապես, այս հողվածով 2022 թվականին նախատեսվել է 270,483.3 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 5,765.4 հազար դրամով ավել: **Կոմունալ ծառայությունները** ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 18,652.8 հազ. դրամի չափով՝ 2021 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից 554.1 հազ. դրամով պակաս: **Կապի ծառայությունները** ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հողվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 191,148.5 հազ. դրամ, ինչը ավել է 2021 թվականի ցուցանիշից 22,811.8 հազ. դրամով, որը հիմնականում պայմանավորված է փոստային ծառայությանների մատուցման արժեքի ավելացմամբ: **Ապահովագրական ծախսերը** նախատեսվել են 64,068.0 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Երևանի քաղաքապետարանում հաշվառված մեքենաների քանակը, ինչպես նաև քաղաքապետարանի կողմից ձեռք բերվող ավտոբուսների հետ կապված ապահովագրական ծախսերը: **Գույքի և սարքավորումների վարձակալությունը**

ծրագրվել է 38,165.0 հազ. դրամ՝ 2021 թվականին նախատեսված ցուցանիշից 542.0 հազ. դրամով պակաս, որը ներառում է քաղաքապետարանի որոշ ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի տրամադրումը և այլ անհրաժեշտ սարքավորումների կամ գույքի վարձակալությունները: **Ներքին գործուղումների գծով** ծախսերի համար նախատեսվել է 21,150.0 հազ. դրամ, որով նախատեսվում է իրականացնել այցեր Արցախի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետության այլ մարզեր, իսկ **Արտասահմանյան գործուղումների** գծով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, նախորդ տարիների փաստացի ծախսերը, 2022 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները, նախատեսվել է 73,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 14,500.0 հազ. դրամով ավել, հաշվի առնելով կանխատեսվող գործուղումների քանակը: Այս հոդվածով նախատեսված ծախսերը վերաբերում են Երևանի քաղաքապետարանի՝ ներառյալ Երևան քաղաքի ավագանու անդամների, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի գործուղումներին: **Վարչական ծառայությունների** գծով նախատեսվել է 11,920.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմերում փաստաթղթերի կարման և կազմման, ինչպես նաև թարգմանչական ծառայությունների համար՝ 2021 թվականին նախատեսված 11,810.0 հազ. դրամի դիմաց: **Համակարգչային ծառայությունների** գծով ծրագրվել է 51,651.8 հազ. դրամ՝ քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի, գանձապետական և բյուջեի նախագծման ու կառավարման համակարգչային առկա ծրագրերի, վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման համար: **Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների** համար նախատեսվել է 67,700.1 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման և միջազգային փորձի ուսումնասիրության համար աշխատակիցների վերապատրաստման ծրագրերին

ակտիվորեն մասնակցելու գործընթացը ապահովելու համար, 2021 թվական հաստատված ցուցանիշից 718.1 հազ. դրամով ավել: **Տեղեկատվական ծառայությունների** գծով ծախսերը նախատեսվել են 22,854.7 հազ. դրամի չափով՝ 2021 թվականին հաստատված ցուցանիշից 583.7 հազ. դրամով ավել՝ պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական և գովազդային ծառայությունների ձեռքբերման համար: **Կառավարչական ծառայությունների** գծով ծախսերը նախատեսվել են 20,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 4,900.0 հազ. դրամով պակաս և ներառում են աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները, մասնավորապես «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու համար, ինչպես նաև փորձաքննության և փորձագիտական ծառայությունները: **Ներկայացուցչական ծախսերի** գծով ծրագրվել է 69,732.0 հազ. դրամ, ինչը պակաս է 2021 թվականի հաստատված ցուցանիշից 7,000.0 հազ. դրամով: **Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները** ծրագրվել են 37,533.8 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանության ծառայությունը, գույքի վերագնահատման, ակտիվների շրջանառման, վերահսկման և կառավարման ծրագրային ապահովման, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցության ապահովման համար անհրաժեշտ ծառայությունները: **Մասնագիտական ծառայությունների** գծով նախատեսվել է 31,588.9 հազ. դրամի չափով ծախս՝ հիմնականում Երևանի քաղաքապետարան կառավարչական հիմնարկի գույքագրման, փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և ավտոմատ հեռախոսակայանի սպասարկման, հնոցապահի ծառայության, վարչական շենքերում վերելակների փորձաքննության տրամադրման համար և ծրագրվել է 2021 թվականի հաստատված բյուջեից 16,122.0 հազ. դրամով ավել: **Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման** գծով ծրագրվել է 221,498.4 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 13,653.5 հազ. դրամով ավել, որը ներառում է քաղաքապետարանի և վարչական շրջանների

ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել են 2021 թվականի գնման գործընթացի արդյունքում ձևավորված գները և քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված և փաստացի շահագործվող գույքի քանակական ցուցանիշները: **Գրասենյակային նյութեր և հագուստ** հոդվածով ծախսերը ծրագրվել են 71,623.5 հազ. դրամ, ինչը պակաս է 2021 թվականի հաստատված բյուջեից 6,169.5 հազ. դրամով, և հաշվարկվել են հաշվի առնելով գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: **Տրանսպորտային նյութերը** ծրագրվել են 199,174.0 հազ. դրամի չափով 2021 թվականի հաստատված ցուցանիշից 59,416.2 հազ. դրամով ավել, որը հիմնականում պայմանավորված ավտոմեքենաների վառելիքի թանկացման հետ: Հաշվարկը իրականացվել է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով, ինչպես նաև որոշ կառուցվածքային ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման հանգամանքով: **Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ** գծով նախատեսվել է 27,541.1 հազար դրամ՝ 2021 թվականի 26,311.4 հազ. դրամի դիմաց, որը հիմնականում նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով: **Հարուկ նպատակային այլ նյութերի** գծով ծրագրվել է 51,110.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա հաստատված 66,900.0 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերում, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության պայմաններում՝ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման շրջանակներում՝ դիմակների, ձեռնոցների, ախտահանիչ նյութերի և այլ նյութերի ձեռք բերման համար: **Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին** հոդվածով ծրագրվել է 285,018.6 հազ. դրամ, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի և 2-րդ վարչական շենքի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերը և ընթացիկ այլ աշխատանքները՝ 2021 թվականի ցուցանիշից 61,122.2 հազ. դրամով ավել, որը պայմանավորված է հաստիքային միավորների ավելացմամբ՝ այդ թվում աշխատավարձերի, ինչպես նաև տնտեսական ապրանքների գների բարձրացմամբ: **Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային**

կազմակերպություններին հողվածով ծրագրվել է 23,527.0 հազ. դրամ, որով նախատեսվում է՝ Երևանի քաղաքապետարանի թվով 4 ավտոբուսների սպասարկման համար, որոնք իրականացնելու են աշխատակազմի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին՝ առավոտյան և երեկոյան ժամերին, սահմանված 4 ուղղություններով: **Այլ նպաստներ բյուջեից** հողվածով նախատեսվել է 53,270.0 հազ. դրամ, որից 230.0 հազ. դրամը հատկացվում է որպես խեղման նպաստ, իսկ 53,040.0 հազ. դրամը՝ որպես դրամական փոխհատուցում Երևան քաղաքի ավագանու անդամներին: **Պարտադիր վճարների** գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական գնման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 9,155.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեից 2,552.9 հազ. դրամով ավել: **Այլ ծախսեր** հողվածով ծրագրվել է 51,000.0 հազ. դրամ՝ 2022 թվականի ընթացքում կառավարչական մարմնի պահպանման հետ կապված այլ չկանխատեսված ծախսերի համար: **Տրանսպորտային սարքավորումների** գծով 2022 թվականի նախագծով ծրագրվել է 47,100.0 հազ. դրամ՝ 4 ավտոմեքենաների ձեռք բերման նպատակով, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և 2 վարչական շրջանների համար, որոնք չունեն ծառայողական մեքենաներ: **Վարչական սարքավորումների** գծով ծրագրվել է 164,073.8 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեից 57,732.1 հազ. դրամով ավել: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրամադրել անհրաժեշտ գույք և տեխնիկա, որոնք արդեն պիտանի չեն օգտագործման և ենթակա են դուրս գրման՝ ապահովելով արդյունավետ աշխատանք, ինչպես նաև նախատեսվում է կահավորել Էրեբունի վարչական շրջանի վարչական շենքում գտնվող և արդեն հիմնանորոգված դահլիճը: **Այլ մեքենաներ և սարքավորումների** գծով նախատեսվել է 41,005.0 հազ. դրամ, որով նախատեսվում է վարչական շենքում տարբեր հզորության ֆանկոյլների ձեռք բերման, ներքին ցանցի բաժանարարների արդիականացման, Երևանի քաղաքապետարանի սերվերային հանգույցների ձեռք բերման, տեխնիկական գործիքների ձեռք բերման և վարչական շենքերում այլ մեքենա մեխանիզմների ձեռք բերման նպատակով: **Ոչ նյութական հիմնական միջոցների** մասով 2022 թվականին նախատեսվում է ձեռք բերել հողերի վարձակալության պայմանագրերի հաշվառման նոր համակարգչային ծրագիր, ինչպես նաև արդիականացնել կիբերանվտանգության համակարգը:

1. **Վարչական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 290,500.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 106,853.9 հազ. դրամի դիմաց կամ 183,641.1 հազ. դրամով ավել: Ծրագրված գումարի շրջանակներում 50,000.0 հազ. դրամ նախատեսվում է իրականացնել Բուզանդ 1/3 ադմինիստրատիվ շենքի 6-րդ հարկի հիմնանորոգման աշխատանքներ, 30,000.0 հազ. դրամ նախատեսվում է Բագրատունյաց 46 հասցեն (նախկին կաթսայատան շենքը) վերակառուցել որպես պահեստային տարածք, ինչպես նաև նախատեսվում է Աջափնյակ, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Նոր Նորք, Նորք Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների վարչական շենքերի մասնակի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ, իսկ Նուբարաշեն վարչական շրջանում նախատեսվում է կառուցել նոր վարչական շենք (60,000.0 հազ. դրամով) ելնելով նախորդի վթարային լինելու հանգամանքից:

2. **Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր** ծրագրով նախագծով ծրագրվել է 14,000.0 հազ. դրամ: 2016 թվականին Երևանի քաղաքապետարանը վարկանիշ շնորհելու ծառայությունների ձեռքբերման համար պայմանագիր կնքեց Fitch միջազգային վարկանշային գործակալության հետ, որը ենթադրում է վարկանիշի վերանայում տարվա մեջ 2 անգամ: Հաշվի առնելով, որ ծրագիրը շարունակական է, 2021 թվականին ծրագրված գումարն ուղղվելու է նույն պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելուն: Ներկայումս Fitch միջազգային վարկանշային գործակալության կողմից Երևան քաղաքին շնորհվել է B+ կայուն վարկանիշ:

3. **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով ծրագրվել է 33,983.0 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները:

4. **Նախագծային աշխատանքներ** ծրագրով նախատեսվել է 202,752.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեով նախատեսվածից 32,490.0 հազ. դրամով պակաս՝ 2023 թվականի բյուջեն ծրագրելիս կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

5. **Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն** ծրագրով նախատեսվել է 90,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակում, մասնավորապես Երևանի քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում, գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակում մինչև 2030 թվականը:

6. Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքներն իրականացնելու, ինչպես նաև Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման և հուշարձանների պահպանական գոտիների նախագծի լրամշակման առաջին փուլի համար:

7. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ ծրագրով նախատեսվել է 73,300.0 հազ. դրամ՝ դատարան դիմելիս պետական տուրքերի վճարման համար, ինչը 16,900.0 հազ. դրամով 23%-ով ավել է 2021 թվականի հաստատված ցուցանիշից, ավելացումը պայմանավորված է պետական տուրքի դրույքաչափերի, ինչպես նաև դատական ընթացակարգերի հաճախականության հետ:

8. Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրով նախատեսվել է 48,552.4 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, ինչպես նաև ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

9. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և Զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն ծրագրերով 2022 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 131,088.4 հազ. դրամ նախորդող տարվա 53,350.0 հազ. դրամի դիմաց: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել թվով 53 հիդրանտ, ձեռք բերել թվով 30 էլեկտրաշակ և դրանց հեռահար կառավարման համակարգեր՝ 218 հատ, որը կնպաստի քաղաքացիական պաշտպանության աշխատանքներին, ինչպես նաև նախատեսվում է աջակցել Երևան քաղաքում իրականացվող զորակոչի իրականացմանը:

10. Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացում ծրագրով նախատեսվել է 8,100.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագիրը:

11. Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ, որով նախատեսվում է՝ տնտեսական և առևտրային հարաբերությունները կարգավորել Երևան քաղաքում, մասնավորապես կկարգավորվի գործող իրավախախտ շրջիկ առևտրի կետերի՝ այդ թվում տրանսպորտային միջոցների, կանխարգելման ընթացակարգերը:

12. Ինքնակամ տեղադրված առևտրի, ծառայությունների մառուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ ծրագրով նախատեսվում է կարգավորել ինքնակամ տեղադրված առևտրային օբյեկտների ապամոնտաժման ընթացակարգերը: Ծրագրի բյուջեն կկազմի՝ 10,500.0 հազ. դրամ:

13. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 24,076.0 հազ. դրամի դիմաց: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Կոմիտասի անվան պանթեոնի այգում խորքային հորի վերակառուցման աշխատանքները:

14. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» դրամաշնորհային ծրագիր ծրագրի իրականացման համար նախատեսվել է 2,887,621.4 հազ. դրամ, որից 277,258.4 հազ. դրամը՝ Երևան համայնքի բյուջեի համաֆինանսավորումն է, 415,000.0 հազ. դրամը՝ պետության կողմից համաֆինանսավորումը, իսկ 712,950.1 հազ. դրամը՝ ծրագրի դրամաշնորհային ֆոնդը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված նապադարոցական հաստատությունների հիմնանորոգման աշխատանքներ, որը կներառի սեյսմակայունության ապահովման, արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման, դռների և լուսամուտների փոխարինման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման համակարգերի, լուսավորության համակարգերի

վերակառուցման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովման բաղադրիչները:

15. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ու ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրերով նախատեսվել է 3,284,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի՝ 3,976,650.0 հազ. դրամի դիմաց, որը 18%-ով պակաս է քան նախորդող տարին:

16. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 232,793.7 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման, ինչպես նաև քայքայված բետոնե եզրաքարերի վերականգնման համար, ինչն պակաս է 2021 թվականի հաստատված ցուցանիշից 12,581.8 հազ. դրամով:

17. Հենապատերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 174,812.6 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեից 12,987.4 հազ. դրամով պակաս: Հենապատերի ընտրությունը կատարվում է ըստ նրանց վթարայնության և վերանորոգման հրատապության աստիճանի: Ծրագրով նաև նախատեսվում է կապիտալ հիմնանորոգել՝ Ա. Խաչատյան 6 և Հ. Հակոբյան 11 փողոցների շրջակայքում, Ն. Զարյանից փ. դեպի Հ. Մուրադյան փ. տանող ճանապարհի, Դավթաշեն 2-րդ թաղամասի 17, 18, 19 և 20 շենքերի հարակից տարածքում, Թայրովի փողոցի դպրոցի մոտակայքում, Թումանյան տուն թանգարանի շրջակայքում, Իսակովի փողոցում, Նաիրի հյուրանոցից դեպի Նոր Նորք տանող ճանապարհատվածում, թիվ 122 և 123 մանկապարտեզների և 61 դպրոցի հարակից տարածքում, գտնվող հենապատերը:

18. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 198,300.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը ավել է 2021 թվականի հաստատված բյուջեից 78,300.0 հազ. դրամով: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել Թամանցիների փողոցի խաչմերուկում գտնվող գետնանցումը, Արաբկիր 41 փողոցից Այգեձոր 22 փողոց տանող հետիոտնային ճանապարհը, Վահան Մուրադյան, Ստեփանյան-Սաֆարյան և Գայի պողոտա խաչմերուկում գտնվող ստորգետնյա անցումները, ինչպես նաև Դավիթ Անհաղթ-Ազատություն խաչմերուկում գտնվող գետնանցումը:

19. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 150,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը պակաս է 2021 թվականի հաստատված բյուջեից 23,700.0 հազ. դրամով: Այն ուղղվելու է Երևան

քաղաքի թվով 44 կամուրջների վերգետնյա անցումների և ուղեանցերի սպասարկմանը, Հաղթանակ կամրջի հիմնանորոգման, ինչպես նաև Իսակովի պողոտայում գտնվող երկաթուղու անցուղու սյուների ամրացմանը:

20. Հրազդանի կիրճի և Երևանյան լճի բարեկարգում ծրագրով նախատեսվել է 92,430.0 հազ. դրամ Հրազդանի կիրճում և Երևանյան լճում ընթացիկ բարեկարգման և մաքրման աշխատանքների համար, ինչպես նաև մետաղական արգելապատնեշների վերանորոգման համար: Նախատեսվել է նաև Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ին հ. 383-Ա որոշմամբ հաստատված Հրազդանի կիրճում և Երևանյան լճում բնապահպանական ծրագրի համայնքի կողմից ֆինանսավորվող մասը:

21. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 606,413.9 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 232,323.9 հազ. դրամով ավել: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքի տարբեր հատվածներում ընթացիկ վերանորոգման և սալիկապատման աշխատանքներ: Նախատեսվում է նաև հիմնանորոգել՝ Տիգրան Պետրոսյանի փողոցի, Գայի արձանի շրջակայքի և Տիգրան Մեծ 71 հասցեի շրջակայքում գտնվող մայթերը, կառուցել նորը՝ Ծարավ Աղբյուր փողոցում, ինչպես նաև կառուցել Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցները միացնող նոր ճանապարհատվածը:

22. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով նախատեսվել է 85,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի բյուջեից 128,089.1 հազ. դրամով պակաս, որն ուղղվելու է Երևանի հիմնանորոգված փողոցների վթարված հատվածների վերականգնման, փողոցների միջնապատերի և այլ հատվածների ընթացիկ բարեկարգման աշխատանքներն իրականացնելու համար, ինչպես նաև դիտահորերի կափարիչների բարձրացմանը: Բյուջետային միջոցներն նախատեսվել են նաև Աթենքի փողոցում ճանապարհի քարաթափումները ցանցապատելու՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը, Արշակունյաց պողոտայի, Շիրակի փողոցի և Աշտարակի խճուղու, Աշտարակ Բաբաջանյանի, Արգավանդ-Շիրակ ճանապարհատվածների սպասարկմանը:

23. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն ծրագրով նախատեսվել է 412,761.7 հազ. դրամ՝ ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա «Փարկինգ

Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման համար և Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար:

24. Թեքահարթակների կառուցում ծրագրերով՝ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման մատչելիություն ապահովելու նպատակով նախատեսվել է 21,824.0 հազ. դրամ՝ շուրջ 150 թեքահարթակի կառուցման համար, ընդ որում առաջնահերթությունը տրվելու է՝ Արցախյան պատերազմի ընթացքում հաշմանդամություն ստացած անձանց ֆիզիկական միջավայրի մատչելիությանը :

25. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով նախատեսվել է 326,526.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և վարչական շրջանների փողոցներում տեղադրել նստարաններ, աղբամաններ, փողոցների ուղենիշեր, հայտարարությունների ցուցատախտակներ, տեղադրել քաղաքային նոր ինստալյացիաներ: Նախատեսվում է նաև սպասարկել գործող՝ թվով 42 հետիոտնային կանչի ռեժիմով լուսացույցային համակարգերը (ընթացիկ տարում նախատեսվում է նաև տեղադրել ևս 49), տեղադրել թվով 20 նոր հետիոտնային կանչի ռեժիմով լուսացույցային համակարգեր, ինչպես նաև ձեռք բերել թվով 10 նոր կանգառասարահներ:

26. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 765,928.6 հազ. դրամ, որի նպատակն է կարգավորել ճանապարհատրանսպորտային ոլորտը՝ ապահովելով դրա անվտանգությունը: Ծրագրի բյուջեն կազմվել է հիմք ընդունելով 2022 թվականի պետական բյուջեի օրենքի մասին նախագիծը:

27. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) և Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումների ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ) ծրագրերով նախատեսված է 3,147,341.7 հազ. դրամ << 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի կառուցման տեխնիկական հսկողության աշխատանքներ,

ներգրավվել ծրագրի մասով աուդիտ և տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագետներ, ինչպես նաև ձեռք բերել նոր քաղաքային ավտոբուսներ:

28. Վերելակների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 1,145,931.2 հազ. դրամ 2021 թվականի հաստատված 1,145,711.4 հազ. դրամի դիմաց: Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել բազմաբնակարան շենքերի համար թվով 100 վերելակ, ինչպես նաև հին վերելակների պահպանումը իրականացնելու համար խիստ անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման և տեղադրման համար:

29. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 2,915,209.6 հազ. դրամ՝ մետրոպոլիտենի սուբսիդավորման նպատակով՝ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը:

30. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն ծրագրով նախատեսվել է 628,315.6 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին, որի ծրագրման հիմքում ընկած է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումը (սուբվենցիա):

31. Խողովակաշարի կառուցում և վերակառուցում ծրագրով նախատեսվել է 34,500.0 հազ. դրամ, Նուբարաշեն վարչական շրջանի Մասիս Ա թաղամասում և 13-րդ փողոցում ջրագծերի հիմնանորոգման նպատակով:

32. Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական միության հարևանության, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել են ընդհանուր 3,689,508.9 հազ. դրամի ծրագրեր որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագրերը (ցանկը կցվում է):

33. Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների նորոգում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվում է 500,000.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագիծը::

34. Չբոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսվել է 31,300.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 28,300.0 հազ. դրամով պակաս: Մասնավորապես նախատեսվում է իրականացնել՝ Երևան քաղաքի բազմալեզու զբոսաշրջային քարտեզի տպագրում, միջազգային ցուցահանդեսների և էքսպոնների մասնակցություն, Երևան քաղաքի բրենդի մշակում, Նոր զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների ստեղծում, ինչպես նաև Սիթի տուր զբոսաշրջային ավտոբուսի տեխնիկական ապահովումը:

35. Դրոշների տեղադրում ծրագրով նախատեսվել է 45,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը, սպասարկումը և նախատեսվել է 2021 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

36. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով նախատեսվել է 14,368.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշի չափով: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը և նախատեսվել է հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցում և գերեզմանատների պահպանման համար:

37. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով նախատեսվել է 168,100.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին սուբսիդավորելու համար, ծրագրվել է 2021 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

38. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով նախատեսվել է 420,337.0 հազ. դրամ՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով:

39. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով նախատեսվել են մուտքեր 5,021,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 480,000.0 հազ դրամ ավել, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 620,000.0 հազ. դրամի չափով,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 4,400,000.0 հազ. դրամի չափով

գ) Շարժական գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 1,000.0 հազ. դրամի չափով:

Հաշվարկներն իրականացվել են հիմք ընդունելով գույքագրման արդյունքները, ընթացիկ տարվա օտարման միտումները և գործընթացի ողջամիտ ակտիվացման հնարավորությունները:

40. Տոնական ձևավորում ծրագրով նախատեսվել է 127,000.0 հազ. դրամ՝ տոնական օրերին և Ամանորին Երևան քաղաքը պատշաճ ձևավորելու համար, ինչպես նաև Էրեբունի-Երևան տոնակատարության ինստալացիոն աշխատանքների իրականացման համար:

41. Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 44,370.0 հազ. դրամ՝ որը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին:

42. Ներդրումային ծրագրերի իրականացում ծրագրով նախատեսվում է 133,000.0 հազ. դրամ որից 5,000.0 հազ. դրամը նախատեսվում է ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների, տպագրության համար, որը նպատակ ունի իրազեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, 13,000.0 հազ. դրամ դրամաշնորհային ծրագրերի, մրցույթների հայտերի լրացման, ինչպես նաև ներդրումային և սուբվենցիոն ծրագրերի կազմման համար մասնագետների ներգրավման, պրեզենտացիաների, ֆիլմերի և այլ նյութերի պատրաստման համար, իսկ 115,000.0 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

43. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 14,102.7 հազ. դրամ, որից 6,300.0 հազ. դրամը՝ աղբահանության

վճարների կանխիկ գանձման անդորրագրերի տպագրության համար, 7,802.7 հազ. դրամը՝ աղբահանության վճարների գանձման ծառայության դիմաց վճարման համար: Ծառայությունների դիմաց վճարումը նախատեսվել է համատիրությունների կողմից փաստացի գանձվող աղբահանության վճարի 3%-ի չափով:

44. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ՝ ավտոբուսներում ուղևորների և կույր հաշմանդամների համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման, կանգառները ավտոմատ հայտարարման համակարգով կահավորման համար:

45. Տոնավաճառների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 610.0 հազ. դրամ, որը նախատեսվում է բաշխել վարչական շրջանների միջև համամասնաբար, տոնավաճառների աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար:

46. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում ծրագրով նախատեսվել է 395,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 385,000.0 հազ. դրամի դիմաց, ինչը պայմանավորված է Երևան քաղաքում և վարչական շրջաններում 2021 թվականի բյուջով չկանխատեսվող դեպքերում հրատապ լուծում պահանջվող աշխատանքների հաճախականությունից:

47. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրին հատկացվել է 277,645.6 հազ. դրամ 2021 թվականի հաստատված 361,545.6 հազ. դրամի դիմաց: Ծրագրով կառուցվելու է թվով 564 հատ աղբամանների հարթակներ, ինչպես նաև ձեռք է բերվելու էքսկավատոր բեռնիչ և թվով 3 բեռնատար մեքենա:

48. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 352,136.5. հազ. դրամ: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան ընտրված օպերատորի միջոցով սպասարկել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի աղբամուղերը (խցանման մաքրում, ախտահանում), իրականացնել աղբամուղերի աղբընդունիչների վերանորոգումը, ինչպես նաև ապահովել վարչական շրջաններում հավաքված (լքված) շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը

49. Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի և Եվրոպական միության

հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 2,278,106.0 հազ. դրամ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի առկա աղբավայրի հարակից՝ շուրջ 29 հա տարածքում նախագծել, կառուցել և շահագործել եվրոպական չափանիշներին համապատասխան նոր աղբավայրի երկու միավոր, ինչպես նաև նույն չափորոշիչներին համապատասխան մեկուսացնել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերի տարածքները:

50. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր ծրագրով նախատեսվել է 4,600,000.0 հազ. դրամ, որով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը:

51. <<Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր>> ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում ծրագրով նախատեսվում է նոր աղբավայրերի կառուցման շրջանակներում կնքված ենթավարկային մարումների նպատակով 10,000.0 հազ. դրամի չափով սուբսիդավորել պայմանագրի կողմ հանդիսացող <<Երևանի նոր աղբավայր>> ՓԲԸ-ին:

52. Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում ծրագրով նախատեսվել է 509,485.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեից 111,485.0 հազ. դրամով ավել՝ հեղեղատար և կոյուղատար համակարգերի վերանորոգման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների համար: Մասնավորապես նախատեսվում է հիմնանորոգել և վերակառուցել հետևյալ հասցեները՝ Աջափնյակ վարչական շրջանի Հակոբյանց փ.-Խ.Խաչատրյան 2-րդ նրբ. և 16-րդ թաղամասի 23-26 շենքերի կոյուղագծերը, Արաբկիր վարչական շրջանի Փափազյան փողոցի հ. 22 շենքի կոյուղագիծը, Կենտրոն վարչական շրջանի Իսահակյան 38 և Բուզանդի 1/3 (Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք) կոյուղագծերը, Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշի 33 և 22 փողոցներում, Ավանեսովի 3-րդ նրբանցքում, Բուռնազյան հ.1 փողոցի կոյուղագծերը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծերեցի 2-րդ նրբանցքի 19-27 և Ջիվանու փողոցի 20-54 կոյուղագծերը, Շենգավիթ վարչական շրջանում Ֆրունզե փողոցի կոյուղագիծը, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Սարկավազի փողոցի

վերջնամասի, Հասարթյան փողոցի 80տ. մինչև Միքայելյան հիվանդանոց ձգվող կոյուղագծերը:

53. Գետերի հունների մաքրում ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշի չափով՝ Գետառ և Ողջաբերդ գետերի հունների մաքրման նպատակով:

54. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 3,750,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի բյուջեի չափով, որից 3,400,000.0 հազ. դրամն ուղղվելու է Կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանման ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի սուբսիդավորումը, իսկ 350,000.0 հազ. դրամը մեքենասարքավորումների ձեռք բերմանը:

55. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 27,932.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար:

56. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 19,320.0 հազ. դրամ՝ 9,320.0 հազ. դրամը գործող զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար, իսկ 10,000.0 հազ. դրամ Արաբկիր վարչական շրջանի Վ. Դավթյանի անվան զբոսայգում նախատեսվում է կառուցել 1 հասարակական զուգարան:

57. Թափառող կենդանիների վնասազերծում ծրագրով նախատեսվել է 234,500.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասազերծումը կանոնակարգելու համար:

58. Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ աշխատանքների իրականացում ծրագրերով նախատեսվել է 1,475,111.0 հազ. դրամ՝ դրամաշնորհային վտանգավոր թափոնների կառավարման ծրագրի իրականացման նպատակով, որից 180,015.7 հազ. դրամը համայնքի մասով համաֆինանսավորմամբ:

59. Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում ծրագրով նախատեսվել է 544,560.0 հազ. դրամ, որից 48,898.8 հազ. դրամը՝ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի համար՝ ադմինիստրատիվ շենքի վերակառուցման, 361,032.8 հազ. դրամ «Աղբահանություն և

սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի վարչական շենքի կառուցման, 119,628.4 հազ. դրամ՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանում» ՀՈԱԿ-ի վարչական շենքի հիմնանորոգման արդեն իսկ կնքված պայմանագրերի անցումը 2022 թվականի բյուջետային տարում ապահովելու համար, իսկ 15,000.0 հազ. դրամ Նուբարաշեն վարչական շրջանում թունաքիմիկատների պահակակետի կառուցման համար:

60. **Ինքնակամ կառույցների քանդում** ծրագրով նախատեսվել է 25,000.0 հազ. դրամ Երևան քաղաքում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքների համար և այն ինքնակամ կառույցների քանդման համար, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների միջոցով:

61. **Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների կողմից վարձակալած բնակարանների փոխհատուցման** ծրագրով 2022 թվականի նախագծով նախատեսվում է 3,564.0 հազ. դրամ՝ Արզումանյան փողոցի վթարային շենքի բնակիչներին փոխհատուցելու նպատակով:

62. **Շենքերի գեղարվեստական լուսավորում** ծրագրով նախատեսվել է 47,600.0 հազ. դրամ՝ 2021 թվականի 22,975.0 հազ. դրամի դիմաց՝ Շենգավիթ վարչական շրջանում Կինոհայրենիքի հրապարակում և հարակից տարածքում լուսատուների տեղադրում, ինչպես նաև Էրեբունի վարչական շրջանում շենքերի գեղարվեստական լուսավորում իրականացնելու նպատակով:

63. **Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ** ծրագրով նախատեսվել է 2,269,951.6 հազ. դրամ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 1,500,000.0 հազ. դրամ գումարի չափով պետության կողմից նպատակային հատկացում՝ համաձայն ՀՀ 2022 թվականի պետական բյուջի նախագծի:

64. **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության»** ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 1,713,549.2 հազ. դրամ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի

շրջանակներում իրականացվում է Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության ցանցի արդիականացման ծրագիրը, որը նախատեսում է առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով:

65. Արտաքին լուսավորության ցանցի ենթակառուցվածքների զարգացում ծրագրով նախատեսվում է 148,000.0 հազ. դրամ, որը ուղղվելու է <<Երեքաղլույս>> ՓԲԸ-ի վարչական շենքի բարեկարգմանը:

66. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 12,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի չափով, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի սեյսմիկ անվտանգության, վթարայնության աստիճանի հետազոտումը և դրանց վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

67. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 1,205,087.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 1,045,609.6 հազ. դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում կատարվելու են վարչական շրջանների հարթ և թեք տանիքների նորոգման, հիմնանորոգման աշխատանքներ: Մասնավորապես հարթ տանիքների մասով նախատեսվում է՝ ամբողջ Երևան քաղաքում, վերանորոգել շուրջ 80,3 հազ. քմ հարթ տանիք, թեք տանիքների կապիտալ հիմնանորոգման մասով նախատեսվում է հիմնանորոգել հետևյալ հասցեները՝ Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների 11 և 28, Լենինգրադյան 28, Ավան վարչական շրջանի Աճառյան 5 և 23/3 շենքերի, Արաբկիր վարչական շրջանի Արծրունի 28, Ավետիսյան 67, Փափազյան 21, Կոմիտաս 30 և 39, Մամիկոնյանց 25, 50 և Ազատություն 3 շենքերի, Էրեբունի վարչական շրջանի Արցախի պողոտա 22, Նուբարաշեն խճուղի հ. 5/5, Նոր Արեշ 15-րդ փողոցի 7, Ռոստովյանի 15, Էրեբունի 9 և 11 շենքերի, Կենտրոն վարչական շրջանում՝ Սայաթ-Նովա 12 և Տիգրան Մեծի 36 շենքերի, Նոր Նորք վարչական շրջանի Մայանի նրբանցք 1 և Մառի 9 շենքերում: Ծրագրով նախատեսվում է նաև առանձին թիթեղների ձեռք բերում, որոնք ուղղվելու են թեք տանիքների մասնակի վերանորոգմանը:

68. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 1,805,859.7 հազ. դրամ՝ նախորդ տարվա 1,670,447.6 հազ. դրամի դիմաց, վարչական շրջանների կողմից ուսումնասիրությունների և խնդիրների գույքագրման արդյունքում՝ ընտրված բակերի ընթացիկ նորոգման,

բարեկարգման, բակային տարածքներում խաղահրապարակների կառուցման և հիմնանորոգման, բակային տարածքներում աստիճանների վերակառուցման, զրուցարանների, նստարանների ձեռքբերման, ինչպես նաև շինանյութի ձեռքբերման և վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում խաղահրապարակների նորոգման համար: Մասնավորապես կապիտալ հիմնանորոգման և կառուցման մասով նախատեսվում է աշխատանքներ իրականացնել հետևյալ հասցեներում գտնվող շենքերի կամ օբյեկտների հարակից բակային տարածքներում՝ Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 24,26,35,37,39, Լենինգրադյան 48/5, Էստոնական 7,9, Ֆիզիկայի բանավան, Սիլիկյան թաղամասի հ.108 դպրոցի շրջակայքում, Ավան վարչական շրջանի Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի 2/4, Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջանի 2/5-2/6, 2/3, Արաբկիր վարչական շրջանի Կիկյան 2-10, Մամիկոնյանց 27, Քանաքեռ ՀԵԿ 2,4,5,7,8,11, Վրացական 15,17, Ազատության 25, Կոմիտասի 48,45/1, 56-58, Արաբկիր 17-ի 25, Ն. Զարյան 19, Տիգրանյան 7, Բաղրամյան 51, Ա. Խաչատրյան 29/1,31, Դավթաշեն վարչական շրջանի 1-ին թաղ 28, 4-րդ թաղ 199 դպրոցի հարակից տարածքի, 33,49, Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշ 15-ի 7, Սարի թաղ 66 մանկապարտեզի շրջակայքում, Արցախի 32ա,32բ,14, Խ. Դոնի 1, Էրեբունի 11, Կենտրոն վարչական շրջանի Մ. Մաշտոցի 51,43, Տ. Մեծի 18-20, 24-28, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի 135,143, Իսակովի 26, Րաֆֆու 73,75,77, Նոր Նորք վարչական շրջանի Ջրվեժի բանավանի 10-15, Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 11-ի 14, Շենգավիթ վարչական շրջանի Արարատյան 7,62/2, Արտաշիսյան 50, Ս. Տարոնցի 12-14,22-24, Գ. Նժդեհի 56ա, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Տիգրանյան 5, Յան Ռանիսի 11ա,15,28, Լեփսուսի 3ա:

69. Քաղաքնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով նախատեսվել է ընդհանուր 721,389.2 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 232,422.4 հազ. դրամ պակաս, որից 40,000.0 հազար դրամ գումար վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում մուտքերի նորոգման համար:

70. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 308,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի չափով՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար:

71. **Կաթսայատների և գույքերի պահպանում** ծրագրով նախատեսվել է 13,759.3 հազ. դրամ, 2021 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 1,649.9 հազ. դրամով պակաս և ներառում է Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

72. **Վթարային պատշգամբների նորոգում** ծրագրով նախատեսվել է 111,772.6 հազ. դրամ՝ 2021 թվականի ճշտված ցուցանիշից 21,517.6 դրամով ավել: Նախատեսված գումարով նախատեսվում է իրականացնել վարչական շրջանների վթարային պատշգամբների ընթացիկ և կապիտալ վերանորոգում:

73. **Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում** ծրագրով նախատեսվել է համայնքային կազմակերպություններին հատկացնել 237,00.0 հազ. դրամ՝ 2021 թվականի բյուջեով նախատեսված 203,340.0 հազ. դրամի դիմաց՝ ռենտգեն սպարատի, ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարքի, ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարքի, աչքի կոնտակտային տոնոմետրի և այլ առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների ձեռք բերման և բուժհաստատություններին տրամադրման համար:

74. **Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 500,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի համեմատ 250,000.0 հազ. դրամով ավել: Նախատեսվում է համայնքային ենթակայության տակ գտնվող թիվ 15, «Արշակունյաց» և «Արաբկիր» մանկական պոլիկլինիկաների և էնդոկրինոլոգիական կենտրոնի հիմնանորոգման նպատակով:

75. **Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի 11,500.0 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել է սոցիալապես անապահով քաղաքացիներին՝ թվով 412 անձի, կոնտրաստավորմամբ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, կոմպյուտերային տոմոգրաֆիայի, կրցքագեղձի քաղցկեղի սքրինինգի և կորոնագրաֆիկ հետազոտությունների ծառայության տրամադրման համար:

76. **Սպորտային միջոցառումների կազմակերպում** ծրագրով նախատեսվել է 104,896.7 հազ. դրամ՝ 2021 թվականի համեմատ 14,243.4 հազ. դրամով պակաս՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված միջոցառումների ցուցանիշները,

ինչպես նաև 2022 թվականին նախագծի շրջանակներում ոլորտի ուսումնասիրության արդյունքում ընտրված միջոցառումների քանակը:

77. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով նախատեսվել է 672,492.0 հազ. դրամ՝ 2021 թվականի համեմատ 76,450.0 հազ. դրամով պակաս, որով նախատեսվում է փուլային տարբերակով իրականացնել Հաղթանակի 40-ամյակին նվիրված զբոսայգու հիմնանորոգումը, Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում հանգստի գոտիների ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ: Նախատեսվում նաև իրականացնել Նոր Նորք վարչական շրջանի Բաղյան 1, Նանսենի 6 և 10 շենքերի միջնամասում հանգստի գոտիների կառուցում, Նանսենի այգու խաղահրապարակի և Վիլնյուսի 101 շենքի տարածքում պուրակի բարեկարգման համար, Նուբարաշեն վարչական շրջանում՝ Ակտիվ քաղաքացի հարթակի շրջանակներում, սբեյթ բորդի այգու կառուցում, Նուբարաշեն կենտրոնական այգու շատրվանի կառուցում և պահպանում, շների զբոսանքի համար զբոսայգիների հարմարեցման և բարեկարգման աշխատանքներ՝ թվով 9 հատ, ինչպես նաև նախատեսվում է իրականացնել Երևանի 2800-ամյակին նվիրված և Սիրահարների այգու ընթացիկ պահպանման աշխատանքներ:

78. Հեծանվահրապարակի շահագործում ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ հեծանվահրապարակի վերանորոգման և գործունեության ապահովման համար:

79. Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում ու պահպանում ծրագրով 2022 թվականին նախատեսվում է 98,820.8 հազ. դրամ՝ Շենգավիթ վարչական շրջանի Գարեգին Նժդեհ 56 ա հասցեում գտնվող սպորտային գոտու կառուցման՝ Ակտիվ քաղաքացի հարթակի շրջանակներում Կարմիր Բլուր արգելոցի հանգստի և սպորտային գոտու կառուցման և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի փողոցի 127 շենքի և Ծ. Իսակովի փողոցի 38/1 շենքի կողմնասերում գտնվող սպորտային գոտիների կառուցման նպատակով:

80. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 604,734.2 հազ. դրամ՝ 2021 թվականի համեմատ 4004.1 հազ. դրամ ավել: Նախատեսվում է Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

81. Գրադարանների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում ծրագրով 2022 թվականի բյուջեով սկիզբ է դրվում գրադարանների վերազինմանը, մասնավորապես նոր թողարկված, արդի և ժամանակակից գրականության տեսքով, որը կնպաստի Երևան քաղաքում գրադարանային մշակույթի զարգացմանը: Ծրագրի բյուջեն նախատեսվում է 20,000.0 հազ դրամի չափով:

82. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2022 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների մասով նախատեսվել է 321,602.6 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի չափով: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ֆինանսավորել՝ «Երևան քաղաքի Պատմության թանգարան», «Ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան», «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ներին և «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՊՈԱԿ-ին:

83. Թանգարանների նորոգում ծրագրով նախատեսվել է 25,000.0 հազ դրամ՝ Ա. Սպենդարյանի անվան տուն-թանգարան շենքի բարեկարգման համար:

84. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 480,320.1 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով, 2021 թվականի հաստատված բյուջեից 6,177.8 հազ. դրամով ավել:

85. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 843,346.7 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեից 52,934.0 հազ. դրամով պակաս: Ծրագիրն իր մեջ ներառում է Երևան պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի համերգային ծրագրերի, Կանանց միջազգային օրվա /մարտի 8/, Թատրոնի միջազգային օրվա /մարտի 27/, Ջազի միջազգային օրվա /ապրիլի 30/, Յեղասպանության զոհերի հիշատակի օրվա /ապրիլի 24/, Ամանորյա և այլ մշակութային միջոցառումներ:

86. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով նախատեսվել է 302,564.0 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

87. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով նախատեսվել է 151,504.5 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 150,451.3 հազ. դրամի

դիմաց՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլիարմոնիա, և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ-ի և «Մարաթուկ» մշակութային կենտրոնին սուբսիդավորելու նպատակով:

88. Թատերական ներկայացումներ ծրագրով նախատեսվել է 455,271.3 հազ. դրամ Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

89. Թատրոնների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 197,644.3 հազ. դրամ՝ Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի հիմնանորոգման, թատրոնի վերազինման և տեխնիկական արդիականացման համար:

90. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 6,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեից 6,000.0 հազ. դրամով պակաս՝ հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

91. Երիտասարդական միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 10,000.0 հազ. դրամ՝ «Աշխատանք երիտասարդներին» տոնավաճառ, Երիտասարդների միջազգային օրվան նվիրված կազմակերպում և Կանավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպման, Երիտասարդների նորարարական ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

92. Անդամակցության վճարներ ծրագրով նախատեսվել է 20,417.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի (ICLEI), Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության և Հայաստանի համայնքների միություն ՀԿ-ին անդամակցության նպատակով:

93. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 10,471,809.9 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 9,063,832.7 հազ. դրամի դիմաց: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման)

ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրվել է 28.0 հազ. դրամ: Յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար նախատեսվել է ամսական 850,0 հազ. դրամ, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով Երեխայի սննդի նորմատիվի պահպանումը՝ յուրաքանչյուրի օրական 485 դրամ հաշվարկով:

94. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի չափով, ինչի շրջանակներում կարիքի գնահատման միջոցառումների արդյունքներից ելնելով նախատեսվում է Երևանի համայնքի ենթակայության մանկապարտեզների համար ձեռք բերել մանկական կահույք, կենցաղային էկտրական սարքավորումներ և այլ անհրաժեշտ գույք, 50,000.0 հազ. դրամի սահմաններում նախատեսվում է մանկապարտեզների սաների համար ձեռք բերել ուսուցողական և զարգացնող մանկական խաղեր: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

95. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 22,637.5 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 30,664.2 հազ. դրամի դիմաց, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների հիման վրա (նախակրթարանների մասով):

96. Հանրակրթական ուսուցում ծրագրով նախատեսվել է 16,349,489.9 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 17,170,804.5 հազ. դրամի դիմաց, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

97. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 4,269,357.5 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 67,999.7 հազ. դրամով պակաս: Ծրագիրը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտդպրոցների՝ «Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ների, պահպանման ծախսերը, որոնք նախատեսվել են ՀՀ 2022 թվականի

պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին՝ 55,863.0 հազ. դրամի չափով:

98. Արտադարձական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 110,000.0 հազ. դրամ՝ մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքներից ելնելով, Երևանի ենթակայության տակ գտնվող արտադարձական հաստատությունների գործունեության ապահովման նպատակով՝ երաժշտական գործիքների, վարչական և սպորտային գույքերի ձեռք բերման և տրամադրման համար: Ծրագրով նշված ապրանքային միավորների նախատեսվում է նաև նվիրատվություն Արցախի Հանրապետությանը:

99. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադարձական դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 7,071.8 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 7,547.8 հազ. դրամի դիմաց, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

100. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսվել է 66,481.0 հազ. դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեի 132,961.2 հազ. դրամի դիմաց, որպես սուբսիդիա՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

101. Արտադարձական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 192,600.0 հազ. դրամ՝ 2021 թվականին նախատեսվածից 85,100.0 հազ. դրամով ավել՝ Շենգավիթի համալիր մարզաձերի մանկապատանեկան մարզադպրոցի կապիտալ հիմնանորոգման, Երևանի ենթակայության Սայաթ-Նովա երաժշտական դպրոցի կապիտալ վերանորոգման և Դավթաշեն վարչական շրջանի Ա. Տերտերյանի արվեստի դպրոցի ցանկապատի կառուցման համար:

102. Աջակցություն արտադարձական կազմակերպություններին ծրագրով նախատեսվել է 10,000.0 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության տակ գտնվող սպորտ դպրոցներին դրամաշնորհային աջակցություն ընթացիկ նորոգումների համար:

103. Նախադարձական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 2,940,000.0 հազ. դրամ՝ 2021 թվականի

հաստատված ցուցանիշից 821,000.0 հազ. դրամով ավելի՝ թիվ 1, 15, 63, 77, 95, 137, 143 և 147 մսուր-մանկապարտեզների հիմնանորոգման համար, հ.48 և 49 մանկապարտեզների բակերի հիմնանորոգման համար և Արաբկիր վարչական շրջանի հ.24 վթարային մանկապարտեզի վերակառուցման համար:

104. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 55,500.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում են մանկավարժների խրախուսման միջոցառումների անցկացում, առարկայական օլիմպիադաներ, հանրային առողջապահության միջոցառումներ, քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ, կիրառական ռազմագիտության միջոցառումներ, խորհրդակցական մարմինների ներուժի զարգացման ուղղված ծրագրեր:

105. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 37,662.2 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

106. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում ծրագրով նախատեսվել է 68,544.0 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

107. Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 14,574.9 հազ. դրամ՝ հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

108. Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանություն ծրագրով նախատեսվում է 4,500.0 հազ. դրամ: Ծրագիրը նախատեսվում է քաղաքային, մշակութային միջոցառումներում կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ներգրավվման համար, ինչպես նաև վարչական շրջաններում խնամակալության և հոգաբարձության անդամների համար միասնական պրակտիկայի ձևավորման համար վերապատրաստումների կազմակերպման նպատակով տարածքների վարձակալության համար

109. Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում Ծրագրով նախատեսված է 2,025.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված է իրականացնել

մանկալքության կանխարգելման նպատակով ծառայությունների մատուցման համատեքստում սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, այդ թվում՝ կացարանի և կոմունալ վճարների փոխհատուցում:

110. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման նպատակով նոր համակարգի շարունական զարգացում՝ արդյունավետ կառավարման նպատակով ծրագրով նախատեսվել է 28,400.0 հազ. դրամ: Ծրագիրը հիմնականում ներառում է համայնքային ծառայողների, ինչպես նաև սոցիալ աշխատողների մասնագիտական վերապատրաստումների շարունակական իրացում, Երևան համայնքի երեխաների և սոցիալ պաշտպանության համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների՝ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը միտված աշխատաժողովների կազմակերպում, Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի ներդրման համար անհրաժեշտ ընթացակարգերի մշակում, 12 վարչական շրջանների սոցիալական աշխատողների համար նյութատեխնիկական միջոցների ապահովում և տնտեսավարման և ծնողավարման հմտությունների զարգացման նպատակով վերապատրաստման մոդուլների մշակում սոցիալական աջակցություն կարիք ունեցող ընտանիքների համար և վերապատրաստումների կազմակերպում:

111. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում ծրագրով նախատեսվել է 136,154.0 հազ. դրամ 2021 թվականի 89,000.0 հազ. դրամի դիմաց՝ տեղական սոցիալական ծրագրերի իրականացման, ընտանիքների համար տոնական և հիշատակի օրերին միջոցառումների իրականացման, ինչպես նաև այլ նպատակային և թիրախային սոցիալական ծրագրերի համար:

112. Հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրով նախատեսվել է 77,500.0 հազ. դրամ՝ տարբեր սոցիալական ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպություններին անդամակցելու նպատակով:

113. «Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում» ծրագրով նախատեսվել է 50,580.0 հազ. դրամ՝ ներառական կրթության կարիք ունեցող երեխաների աջակցության, տարեցների համար նախատեսված շուրջօրյա խնամքի կենտրոնի ծառայություն, հաշմանդամության խումբ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի կենտրոնի

ծառայություն: Ծրագիրը իր մեջ ներառում է նաև Սոցիալական աջակցություն և ներառական կրթության կարիք ունեցող երեխաների աջակցություն և կարիքների գնահատման արդյունքում սոցիալական ծառայությունների մատուցում

114. «Բազմազավակ, երիտասարդ, և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն» ծրագրով նախատեսվել է 102,500.0 հազ. դրամ՝ բազմազավակ ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև բազմազավակ և երիտասարդ ընտանիքներին աջակցության նպատակով վերապատրաստումների իրականացման (մոդուլների մշակում, տնտեսավարում, ծնողավարության հմտություններ և այլն) նպատակով:

115. Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն ծրագրով նախատեսվել է 10,000.0 հազ. դրամ՝ թվով շուրջ 80 հայրենադարձ ընտանիքներին աջակցության նպատակով:

116. Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն ծրագրով նախատեսվել է 138,644.5 հազ. դրամ՝ 2021 թվականի 171,000.0 հազ. դրամի դիմաց: Ծրագիրը իր մեջ ներառում է տարբեր աջակցության միավորների՝ այդ թվում գույքային, կենցաղային և ընթացիք վերանորոգումների տեսքով:

117. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվում է 648,864.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի օրենքի մասին նախագիծը:

118. Առողջության ապահովագրություն ծրագրով նախատեսվել է 666,588.0 հազ. դրամ, 2021 թվականի ցուցանիշից 7,529.0 հազ. դրամով պակաս: Յուրաքանչյուր աշխատակցի համար առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափի (գումարի) գումարը նախատեսվում է սահմանել 57.0 հազ. դրամ: Առողջության ապահովագրության ծառայություններ են ձեռք բերվում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների, շախմատի դպրոցների, մուր-մանկապարտեզների աշխատակիցների, «Երևանտրանս» ՓԲԸ-ի աշխատակիցների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, Երևան քաղաքի թատրոնների և թանգարանների, գրադարանների աշխատակիցների համար, ինչպես

նաև մարզադպրոցների, երաժշտական և արվեստի դպրոցների, ՄՊՍԿ-ների, մշակույթի կենտրոնների, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի աշխատակիցներին:

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 4,261,021.7 հազ. դրամի չափով պակասուրդ: Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում նախատեսվում է վարկի ստացում 1,470,208.4 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 4,975,261.2 հազ. դրամի չափով: Միաժամանակ նախատեսվում է 172,593.9 հազ. դրամն ուղղել «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը, 11,854.0 հազ. դրամն ուղղել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը, իսկ 2,000,000.0 հազ. դրամը՝ «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2021 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագիծը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն, 2021 թվականի հոկտեմբերի 18-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամներին, հոկտեմբերի 21-ին հրավիրված նիստում տվել է իր դրական եզրակացությունը 2021 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև նոյեմբերի 5-ը Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու համար: Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <http://www.e-draft.am> կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական կայքում հրապարակվել է Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծի էլեկտրոնային տարբերակը կից բացատրագիր-հիմնավորմամբ: 2021 թվականի նոյեմբերի 9-ին Երևանի քաղաքապետարանում

կազմակերպվել է Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագծի հանրային քննարկում՝ հանրային բաց լսումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 11-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է իր դրական եզրակացությունը Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

Այսպիսով, Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *Եկամուտների գծով՝ 94,560,201.2 հազ. դրամ,*
2. *Ծախսերի գծով՝ 98,821,222.9 հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝ 4,261,021.7 հազ. դրամ:*

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ